*սորա բոլորն իրեք գեղ կայր հայի՝ Սղանօս, Պէնտօս, Էրքափսուլի: Նաեւ ամէն գեղօրայքն սօփ կու բանին. ապա Ալաճուխին լաւ է քան զամէնն. բայց Անկուրու բանին նման չկայ: Եւ այս քաղաքս լաւ չոր միս լինի. գինի ազնիւ, թանձր եւ ախորժ, որ այլ տեղ չի լինիր:*

*Անտի գնացաք ԿՕՆԻԱ: Անտի ԱԽՇԱՐ, ԵՆԿԻՇԱՐ, որ եւ անդ կան Հայք սակաւ. անդ տեսաք զկօռն Նասրատինու, վրան քէմէր չինած. եւ բազում ծիծաղեցաք: Կայր եւ Ենկիշարն վիմաշէն եկեղեցի մի. որ եւ զնա Պաւղոսի չինուածք ասեն եւ օծել: Անտի եկաք ՍԻՎՐԻՀԻՍԱՐ եւ ԽԱՐԱՀԻՍԱՐ, ուստի ափիօն կ'ելնէ. որ զարմանալի բերդ ունի եւ անառիկ ամրոց, բարձր եւ սարբ որպէս Օսմանճուխին. վաթսուն տուն Հայ կայ. քարէ եկեղեցի մի. եւ չարեկ միլ դուրսն վանք մի գեղն Հայի: Բայց եւ նոքա հայնակ չի գիտեն, այլ Թրքի լեզուով խօսին. սոքա ամենեքեան Անկուրու Թէմն են. այլ եւ Կօնիայ եւ այլքն քաղաքն բերթացիք (հայնակ) չի գիտեն. գրսեցիք գիտեն:*

*Եւ այն ամէն աշխարհն սպիտակ այծք են, սուրու սուրու շրջին. եւ մազն փայլուն եւ ազնիւ իբր զապրշում եւ սիրմայ. բնաւ սեւ չկայ. եւ ասին թէ յառաջն խիստ շատ էր եւ անթիւ. Ճէլալիքն զօրս սպանին, զօրս փախուցին, զայլն հետ տարան: Եւ կայր քաղաքս մեծ եաբու մի հին, վիմաշէն եւ մար-*

34 կօնիայ: